ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ

ԳԱԳԻԿ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Վերջին տարիներին սիրիացի փախստականների ինտեգրման գործընթացում առաջ եկած հիմնախնդիրները եվրոպական երկրներում առաջ են բերում ճգնաժամային իրավիճակին բնորոշ համալիր դրսևորումներ, որոնք ուղեկցվում են կառավարման համակարգերի լեգիտիմությանը և ժողովրդավարական համընդհանուր սկզբունքներին վերաբերող ճգնաժամային զարգացումներով: Մասնավորապես միգրանտների ընդունման գործընթացում հաճախ երկընտրանք է առաջանում պետական անվտանգության և ժողովրդավարական հիմնարար ազատությունների միջև: Պատահական չէ, որ նման զարգացումներում միգրացիոն ավելի մեղմ քաղաքականություն իրականացնող եվրոպական կառավարությունները կոշտ քննադատության են ենթարկվում արմատական խմբերի կողմից չափից դուրս հանդուրժողական մոտեցումների համար: Այս իրողություններից ելնելով՝ որոշ փորձագետներ, հաշվի առնելով ազգայնական տրամադրությունների նկատելի աճը, նախանշում են պետական կառավարման ազատական-ժողովրդավարական հարացույցի նահանջը՝ հօգուտ կառավարման ազգայնական հարացույցի[1]:

Նման մարտահրավերների պարագայում քաղաքացիական հասարակության ինստիտուտները չեն կարող անմասն մնալ միգրացիոն հոսքերի վերահսկմանն ուղղված պետական ռազմավարությունների գործընթացներում առաջացած տարաբնույթ հիմնախնդիրներից:

Այս տեսանկյունից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում քաղաքացիական հասարակության (այսուհետ՝ ՔՀ) դիսկուրսի ուսումնասիրումը հիշյալ միգրացիոն ճգնաժամի կամ ԶԼՄ-ներում առավել ընդունված ձևակերպմամբ՝ փախստականների ճգնաժամի տեսանկյունից: Մասնավորապես կարևոր է այս համատեքստում ուսումնասիրել քաղաքացիական հասարակության դիսկուրսի դրսևորումները փախստականների ինտեգրման գործընթացներում, ինչպես նաև բացահայտել միգրանտների անվտանգության և իրավունքների երաշխավորման հիմնահարցերի շուրջ ուրվագծվող քաղաքացիական հասարակության հայեցակարգերը և դրանց իրացման գործնական հնարավորությունները:

Ուսումնասիրելով վերջին տարիներին Մերձավոր Արևելքում դրսևորվող քաղաքական տեղաշարժերը՝ կարող ենք արձանագրել, որ

[1] Տե՛ս «In Europe, nationalism rising». HARVARD gazette. February 27, 2017, http://news.harvard.edu/gazette/story/2017/02/in-europe-nationalisms-rising/

դրանք տարածաշրջանի ապակայունացման հաջորդական ալիքների պատճառ դարձան, որոնք ուղեկցվեցին սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային, կրոնական բնույթի անբարենպաստ զարգացումներով:

Մյուս կողմից՝ ժամանակակից աշխարհի կապակցվածությամբ և դրանում հաղորդակցական համակարգերի զարգացածությամբ պայմանավորված՝ տեղային այդ ճգնաժամերը արագորեն աշխարհաքաղաքական դրսևորումներ ստացան:

Մասնավորապես, սկսած 2011 թվականից, երբ Սիրիայում բռնկվեցին քաղաքացիական պատերազմի առաջին օջախները, մոտ չորս միլիոն միգրանտ ապաստան գտավ հարևան երկրներում, այդ թվում՝ Լիբանանում (1.172.753), Հորդանանում (629.128), Թուրքիայում (1.805.255), Իրաքում (249.726), Եգիպտոսում (132.375)[2]: Այդուհանդերձ, հետագա զարգացումները ցույց տվեցին, որ այդ երկրները չդարձան միգրացիոն տեղաշարժի վերջնակետեր: Պայմանավորված սոցիալական մի խումբ խնդիրներով (այդ թվում՝ կրթական և առողջապահական)՝ հիշյալ երկրների դերը սահմանափակվեց միայն միջանկյալ նշանակությամբ, քանզի միգրացիոն հաջորդ հոսքերն այս գոտիներից ուղղորդվեցին եվրոպական պետություններ: Այս տեղաշարժի հետևանքով 2015 թ. եվրոպական երկրներն առճակատվեցին երկրորդ համաշխարհային պատերազմից հետո նկատված ամենախոշոր միգրացիոն ներհոսքի գործընթացներին (ավելի քան մեկ միլիոն փախստական)[3]: Փախստականների զանգվածային տեղաշարժման գործընթացներում ծագած զգալի դժվարությունների և մարդկային կորուստների վերաբերյալ ԶԼՄ-ների հրապարակումները լրացուցիչ սրություն հաղորդեցին փախստականների նկատմամբ «դռնփակ» քաղաքականություն վարող կառավարությունների դեմ դժգոհություններին (եվրոպական երկրների շարքում թերևս բացառություն կարելի է համարել Գերմանիայի և Շվեդիայի օրինակը (2015 թ. Գերմանիան մոտ 800.000 փախստական է ընդունել, իսկ Շվեդիան՝ 163.000)[4]:

Քաղաքացիական ահագնացող դժգոհությունները պայմանավորված էին տվյալ երկրների կողմից պետական ռեսուրսների ոչ արդյունավետ տնօրինմամբ և ժողովրդավարական սկզբունքների անտեսմամբ[5]: Տվյալ համատեքստում առանձնակի ուշադրության է արժանի Մեծ Բրիտանիայի կառավարության կոշտ քաղաքականությունը, որի հետևանքով զանգվածային բողոքի շարունակական ալիքներ են բարձրանում:

Այս ամենի հետևանքով եվրոպական մի շարք երկրներում (հատկապես Մեծ Բրիտանիայում) սկզբնավորված քաղաքացիական շար-

---

[2] Տե՛ս «The UN Refugee Agency», 9 Jule 2015, http://www.unhcr.org/news/press/2015/7/559d67d46/unhcr-total-number-syrian-refugees-exceeds-four-million-first-time.html

[3] Տե՛ս INTERNATIONAL ORGANIZATION FOR MIGRANTS, Irregular Migrant, Refugee Arrivals in Europe Top One Million in 2015: IOM, 22 December 15, https://www.iom.int/news/irregular-migrant-refugee-arrivals-europe-top-one-million-2015-iom

[4] Տե՛ս «Swedish Migration Agency report», 12 January 2016, https://www.migra tionsverket.se/English/About-the-Migration-Agency/News-archive/News-archive-2016/2016-01-12-Nearly-163000-people-sought-asylum-in-Sweden-in-2015.html

[5] Տե՛ս «By Sybille Fuchs», 19 July 2014 // World Socialist Web Site, https://www.wsws.org/en/articles/2014/07/19/refu-j19.html

ժումների հիմնական պահանջներն էին՝ փախստականների անվտանգ տեղաշարժի ապահովումը, նրանց իրավունքների պաշտպանությունը, ընդունող երկրներում վերջիններիս ինտեգրման արդյունավետ քաղաքականություն վարելը: Հատկանշական է, որ եվրոպական երկրներից շատերի կողմից փախստականների նկատմամբ կիրառվող բացառողական և կրավորական քաղաքականությանը համարժեք հակազդելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ քաղաքացիական հասարակությունների կազմակերպման տեղային բնույթը փոխարինվում է վերազգայինով, ինչը հնարավորություն է տալիս առավել համալիր և համագործակցված պայքարելու փախստականների նկատմամբ կիրառվող հականերառական քաղաքականության դեմ և առավել արդյունավետ աշխատանքներ իրականացնելու փախստականների խմբերի հետ: Մասնավորապես՝ սոցիալական ցանցերի և հաղորդացական ժամանակակից մեխանիզմների միջոցով եվրոպական մի շարք երկրներում միաժամանակ կազմակերպվում են փախստականների իրավունքների պաշտպանության և պետական իշխանությունների ոչ արդյունավետ քաղաքականության դեմ ուղղված բողոքի ցույցեր և երթեր: Միևնույն ժամանակ՝ քաղաքացիական հասարակության կամավորական խմբերը նյութական օգնություն են հավաքում փախստականների համար և տարատեսակ ծառայություններ իրականացնում նրանց ճամբարներում: ՔՀ խմբերի նախաձեռնությամբ ստեղծված միջազգային ֆոնդերը և համացանցային տեղեկատվական հարթակները հնարավորություն են ընձեռում աշխարհի տարբեր երկրներից միգրանտների խնդիրների լուծման համար դրամական միջոցներ ներգրավելու, ինչպես նաև կրթական և տեղեկատվական տարատեսակ միջոցներով համաշխարհային հանրության շրջանում հիմնավոր պատկերացում ձևավորելու ստեղծված իրավիճակի շուրջ:

Անհրաժեշտ է նաև նշել, որ նման շարժումները, հիշյալ գործիքային նշանակությունից զատ, նաև կառավարությունների կողմից իրականացվող կոշտ ու հականերառական քաղաքականությունը խնդրականացնող դիսկուրսային հարթակներ դարձան:

Մասնավորապես, փախստականների իրավունքների պաշտպանության շուրջ ձևավորված քաղաքացիական հասարակության դիսկուրսի համատեքստում ուշագրավ օրինակ է **«Բարի՛ գալուստ, փախստականնե՛ր» (Refugees Welcome)** վերազգային սոցիալական շարժումն իր պատկերագրային դրսևորումներով: Ժամանակակից մի շարք վերլուծաբանների համոզմամբ՝ այս շարժման օրինակով հաստատվում է այն կանխավարկածը, որ ընթացիկ մարտահրավերների պայմաններում քաղաքացիական շարժումների բնույթն էապես փոխվել է, հետևաբար և փոխվել են այն հայեցակարգային մոդելները, որոնց հիման վրա կազմակերպվում են այդ շարժումները: Ըստ այդմ՝ **«Բարի՛ գալուստ, փախստականնե՛ր»** սոցիալական շարժման կառուցվածքային, գործառական և բովանդակային յուրահատկությունները վերլուծելու համար հարկ է հրաժարվել սոցիալական շարժումների հին (դիցուք՝

մարքսիստական) հայեցակարգերի հասկացութային համակարգից և երևույթին մոտենալ սոցիալական շարժումները բացատրող ժամանակակից հայեցակարգերի դիրքերից, որոնց համատեքստում համանման զանգվածային բողոքի գործընթացները ստացել են «Նոր սոցիալական շարժումներ» (այսուհետ՝ ՆՍՇ, անգլ.՝ NSMs) բնութագիրը: Մասնավորապես, ի տարբերություն դասական ձևերի, ՆՍՇ-ն բնորոշվում է կառուցվածքային, մարտավարական և նպատակների սահմանման այլ չափանիշներով: Մի շարք գիտնականներ նշում են, որ նոր սոցիալական շարժումները աչքի են ընկնում ապակենտրոնացված, ապաստիճանակարգված, հորիզոնական հարաբերություններով և վերազգային ցանցեր ներառելու մշակված մեխանիզմներով[6]: Մյուս կողմից հատկանշական է, որ հեղինակներից շատերը նոր սոցիալական շարժումների յուրահատկությունները մատնանշելիս առանձնակի ուշադրություն են դարձնում դրանց և քաղաքացիական հասարակության փոխկապվածությանը: Այս կապակցությամբ Էնդրյու Արատոն (Andrew Arato) և Ջին Կոենը (Jean L. Cohen) կարծում են, որ նոր սոցիալական շարժումների գործառույթը չի սահմանափակվում միայն պետական համակարգի դեմ ուղղված գործողություններով, և ըստ նրանց՝ նոր սոցիալական շարժումները ՔՀ դրական ներուժի իրացմանը նպաստող դինամիկ տարրեր են, ուստի քաղաքացիական հասարակությունը դիտվում է որպես նոր սոցիալական շարժումների դրսևորման հարթակ, որտեղ ՔՀ արդիականացումը դառնում է ՆՍՇ-ի նպատակներից մեկը: Ընդ որում՝ ՆՍՇ-ի նշանակությունը վերլուծելիս Արատոն և Կոենը առանձնակի ուշադրություն են դարձնում շարժումների մշակութային հայեցակետերին և հատկապես նոր ինքնությունների ձևավորմանը[7]:

Այս շրջանակներում ուշագրավ է, որ փախստականների հիմնախնդիրներով զբաղվող քաղաքացիական հասարակության հիշյալ խմբերին, բացի եվրոպական երկրների քաղաքացիներից, ակտիվորեն մասնակցում են նաև հենց իրենք՝ փախստականները, ինչը օգնում է հաղթահարելու կամավորների և փախստականների միջև ընկած հաղորդակցական բնույթի որոշ խոչընդոտներ, ինչպես նաև խրախուսական նշանակություն է ունենում փախստականների ինքնակազմակերպման գործընթացներում: Այս ամենի հետ մեկտեղ՝ փախստականների և տեղաբնակների համատեղությամբ ձևավորված քաղաքացիական խմբերը հանդուրժողականության և փախադարձ վստահության յուրօրինակ նախադեպեր են դառնում՝ նպաստելով տվյալ երկրում սոցիալական կապիտալի ինտեգրմանն ու մասնակցային մշակույթի զարգացմանը:

Անդրադառնալով ՆՍՇ դիսկուրսին՝ որոշ գիտնականներ այն կարծիքն են հայտնում, որ մարքսիստական, դասակարգային և գլխավորապես տնտեսական խնդիրների շուրջ համախմբված դիսկուրսը

---

[6] Տե՛ս **Melucci, A.** 1980. The New Social Movements: A Theoretical Approach. Social Science Information, 19 (2), էջ 199-226, **Habermans, J.,** 1981, New Social Movements. Telos, 49 (Fall), էջ 33-37**:**

[7] Տե՛ս **Jean L. Cohen**, **Andrew Arato**, 1992. Civil Society and Political Theory, Massachusetts Institute of Technology**:**

փոխարինվում է ազատական դիսկուրսով, որում առաջնային պլան են մղվում մարդու իրավունքները (հատկապես՝ մարգինալ խմբերի): Մասնավորապես, ըստ Քլաուս Օֆֆի, նոր սոցիալական շարժումների համար քաղաքացիական հասարակությունը ծառայում է որպես համատեղ գործողությունների խոշոր հարթակ, որում նոր սոցիալական շարժումները, ի տարբերություն հին ձևերի, որոնք ձևավորվում էին քաղաքական և գաղափարախոսական համոզմունքների շուրջ լայն համախմբան պայմաններում, հակված են կենտրոնանալու առանձին կամ սահմանափակ թվով հարցերի վրա: Հրաժարվելով ողջ քաղաքական համակարգը մեկ կենտրոնի շուրջ զարգացնելու փորձերից՝ նոր սոցիալական շարժումները կենտրոնանում են մարգինալ ու բացառված խմբերի շահերի ներկայացման և պաշտպանության նպատակների վրա[8]: Այս առումով **«Բարի՛ գալուստ, փախստականնե՛ր»** քաղաքացիական շարժման ուսումնասիրությունը կարևոր է հատկապես փախստականների իրավունքների պաշտպանությանն ուղղված ՔՀ փորձառություններում մշակված մեխանիզմների տեսանկյունից: Դատելով շարժման ընթացքում բարձրացված քաղաքացիական պահանջներից, կիրառվող մարտավարություններից և դրանում տեղ գտած դիսկուրսային տարրերից՝ այն ևս հատկանշվում է մարդու իրավունքների ազատական դիսկուրսի օրակարգային դերակատարմամբ: Պատահական չէ, որ սույն շարժման շրջանակներում ազատական-ժողովրդավարական արժեքների ընգծումը խորհրդանշական արտահայտություն է գտնում շարժման ընթացքում ձևակերպված կարգախոսներում և պաստառային գրություններում: ՆՍՇ արտահայտչական նման ձևերի արդիականությունը հաշվի առնելով՝ փախստականների խնդիրների շրջանակներում ձևավորված ՔՀ դիսկուրսի տարրերին ծանոթանալու համար ցուցապաստառային գրությունների ուսումնասիրությունը ներկայացուցչական տեղեկատվություն է ապահովում քաղաքացիական հավաքական դիրքորոշումների և օրակարգային պահանջների մասին: Համաձայն ժամանակակից ռուս գիտնական Ե. Յ. Խոդուսի՝ քաղաքական պաստառը, միավորելով խոսքային, պատկերագրային, իմաստաբանական կոդեր, յուրօրինակ խառնատեքստ է և դառնում է մի կողմից կոլեկտիվ ինքնության հաստատման, մյուս կողմից՝ առանձին դերակատարների ինքնարտահայտման միջոց[9]: Ի հավելումն դրա, ազգագրագետ Հարություն Մարությանը, անդրադառնալով Ղարաբաղյան շարժման (1988-1990 թթ.) ընթացքում տեղ գտած ցուցապաստառների տեքստային բովանդակությանը, դրանք դիտում է որպես ազատ խոսքի, ինքնության վերագնահատման և կոլեկտիվ մտածողության արտահայտման պատկերագիր վկայություններ[10]: Ըստ

---

[8] Տե՛ս New Social Movements: Challenging the Boundaries of Institutional, Politic, Vol. 52, № 4, Social Movements (WINTER 1985)**:**

[9] Տե՛ս **Ходус Е. Ю.** Политический плакат Франции, как креолизованный текст // "Вестник Ставропольского государственного университета", 2011, № 76:

[10] Տե՛ս ***Հ. Մարության,*** Հայ ինքնության պատկերագրությունը, Հատոր 1, Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը, Եր., 2009, էջ 20:

այդմ՝ «Բարի՛ գալուստ, փախստականնե՛ր», ինչպես նաև Ֆրանսիայի Կալե քաղաքում անցկացված զանգվածային ցույցերի պաստառային կարգախոսների դիտարկումը հնարավոր է դարձնում վեր հանել միգրացիոն քաղաքականության հիմնախնդիրների շուրջ ծավալված քաղաքացիական հասարակության դիսկուրսի առանցքային բաղադրիչները: Այս դիտանկյունից պաստառային կարգախոսներն ուսումնասիրելը թույլ է տալիս առանձնացնել տարբեր դիսկուրսային համատեքստեր, որոնք, արտացոլված լինելով վերոհիշյալ քաղաքացիական շարժումների կարգախոսներում, ամբողջացնում են փախստականների խնդիրների շուրջ ձևավորված ՔՀ դիսկուրսը:

Մանրամասնելով նշենք, որ այս գրությունների վերլուծությամբ ուրվագծվում է համահավասարության (էգալիտար) սկզբունքներն արդիականացնող դիսկուրսը, որը պատկերավոր դրսևորումներ է ստացել «Բարի՛ գալուստ, փախստականնե՛ր, ո՛չ ռասիզմին», «Մեր եվրոպան առանց սահանների», «Ո՞ւր են մարդու իրավունքները», «Ոչ մի մարդկային էակ ապօրինի չէ», «Ո՛չ սահմաններին», «Ո՛չ մի սահման», «Ոչ ոք ապօրինի չէ» կարգախոսներով: Այս համատեքստում ներկայացվում են նաև մարդասիրական դիսկուրսին հատուկ ուղերձներ պարունակող պաստառային գրություններ, որոնց թվում հատկանշական են հետյալ կարգախոսները՝ «Եկեք օգնե՛նք մարդկանց», «Նրանք վտանգավոր չեն, նրանք վտանգի մեջ են», «Փախստականները մարդկային էակներ են», «Ես սիրում եմ փախստականներին» (վերջինիս պատկերագրությանը բնորոշ են երիտասարդական զանգվածային մշակույթին բնորոշ խորհրդանշական, ոճական լուծումներ):

Վերլուծական նոր հնարավորություններ է ստեղծում պաստառային կարգախոսների դիտարկումը վերազգային դիսկուրսի համատեքստում: Այս պարագայում նշանակալից օրինակ է Անգլիայի Դուրհեմ քաղաքի բողոքի երթերից մեկում տեղ գտած «Ո՛չ սահմաններին, ո՛չ ազգերին» պաստառային գրությունը, որտեղ, ազգային, տեղային շահերի գերակայման վրա հենվող դիսկուրսին ի պատասխան, արդիականացվում են վերազգայնության, համաներառական դիսկուրսի սկզբունքները: Ըստ այդմ՝ «Բարի՛ գալուստ, փախստականնե՛ր» շարժումը և փախստականների հիմնախնդիրների շուրջ ձևավորված համանման շարժումներն իրենց հայեցակարգով և դիսկուրսային փորձառություններով առավելապես տեղակայվում են ազատական-ժողովրդավարական դիսկուրսում ձևակերպվող արժենորմային համակարգերի վրա՝ միաժամանակ ներառելով վերազգայնության դիսկուրսին բնորոշ տարրեր:

Այսպիսով, միգրացիոն ճգնաժամի շրջանակներում քաղաքացիական հասարակության դիսկուրսի ուսումնասիրությունը և այս համատեքստում նոր սոցիալական շարժումների դիտարկումը թույլ են տալիս դուրս բերել ՔՀ կազմակերպման արդի մեխանիզմները (դիցուք՝ վերազգային ցանցերի ձևավորումը), ինչպես նաև գաղափարախոսական, իմաստային, արժեքային այն շրջանակները, որոնք օրակարգային նշանակություն ունեն քաղաքացիական հասարակության հիշյալ փորձառություններում:

Ամփոփելով անհրաժեշտ է նշել, որ տվյալ դիտանկյուններից երևույթի ուսումնասիրությունը թույլ է տալիս ուրվագծել մարդասիրական արժեքների շեշտադրումներով և վերազգային դիսկուրսի շրջանառմամբ զուգորդված ազատական-ժողովրդավարական հարացույցի արժենորմային համակարգերն արդիականացնող դիսկուրսը՝ ճանաչողական և վերլուծական նոր դիտանկյուններ ապահովելով քաղաքացիական հասարակության արդի ուսումնասիրություններում:

Բանալի բառեր - *միգրացիա, փախստականների ճգնաժամ, նոր սոցիալական շարժումներ, դիկտուրս, քաղաքական պաստառ, վերազգային քաղաքացիական հասարակություն*

ГАГИК ТУМАНЯАН – ***Проблемы интеграции беженцев в дискурсе европейского гражданского общества.*** **–** В последние годы на фоне гражданской войны в Сирии наблюдается непрерывный поток беженцев в Европу. Масштабность миграции создаёт комплексные проблемы, связанные с безопасным продвижением и интеграцией беженцев, и провоцирует в ряде стран жёсткую закрытую миграционную политику. В этих условиях изменяется роль институтов гражданского общества. В частности, повышается их инструментальная и дискурсивная значимость, имплементируемая посредством гуманитарно-вспомогательной и волонтёрской работы с мигрантами.

Ключевые слова: *миграция, кризис беженцев, новые социальные движения, политический плакат, транснациональное гражданское общество*

GAGIK TUMANYAN – ***The Issues of Refugee Integration in the European Civil Society Discourse.*** **–** In recent years on the background of Syrian civil war, an increasing flow of refugees to European countries was observed. The intensity of these migration processes raises the complexity of problems related to refugee's safe mobility and integration processes accompanied by strict and enclosed migration policy in many European countries. In the crater of these developments, the role of civil society gets more significance. Particularly fictionalization of CS institutions defined with instrumental and discursive meanings, on the one hand, manifests itself by humanitarian-supportive, voluntary missions of CS subjects, on the other hand with articulated critical discourse and different forms of its implication (New social movements, for instance) in the sphere of CS. Thus, this paper based on the analysis of iconographic elements of CS discourse explores the hegemonic role of liberal democratic orientations and normative value systems, as well as discursive implementations of transnational paradigm.

Key words: *migration, refugee crisis, new social movements, discourse, political poster, transnational civil society*